ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 06 » 03 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000020

Ձեռնարկողը՝ ***«Սնապ» ՍՊԸ***
Ք. Թալին, Թումանյան 5

Գործունեությունը՝ ***Թալին-1 փուֆերի հանքերևակման տարածքում 2019-2021թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000020

՝ 06 **՝** 03 **2020թ.**

Արագածոտնի մարզի Թալին-1 տուֆերի հանքերևակման տարածքում 2019-2021 թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Սնատ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Արագածոտնի մարզի Թալին համայնք

Արագածոտնի մարզի Թալին-1 տուֆերի երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրություն:

Թալինի տուֆերի երևակումը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզի Թալինի վարչական տարածքում և տեղակայված է Թալին քաղաքից 2.5կմ հյուսիս-արևելք, Ակունք գյուղից մոտ 2.5 կմ հարավ-արևմուտք և զբաղեցնում է 4.36 հա մակերեսով տարածք:

Երևակման տարածքի հողերը գյուղատնտեսական նպատակային նշանակության են, իսկ ըստ գործառնական նշանակության՝ դրանք վարելահողեր և արոտավայրեր են:

Նկարագրական մաս. նախատեսվում է երևակման տարածքում կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ նպատակ ունենալով պարզաբանել տուֆերի որակական հատկանիշները, որոնք պետք է համապատասխանեն 9479-98, 4001– 98 ԳՕՍՏ–երի և ՀԱՏ ԳՕՍՏ 100-95 «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» տեխնիկական պահանջներին և բավարարեն վերջնարտադրանքի ստացումը:

Ուսումնասիրվող երևակման տարածքի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են.

X_1 – 4474558	Y_1 - 8406436
X_2 – 4474642	Y_2- 8406456
X_3– 4474772	Y_3 – 8406456
X_4 – 4474864	Y_4 - 8406500
X_5 – 4474949	Y_5 - 8406578
X_6 – 4474923	Y_6 - 8406642
X_7 – 4474800	Y_7- 8406602
X_8– 4474710	Y_8- 8406581
X_9 – 4474613	Y_9- 8406544
X_{10} – 4474551	Y_{10} - 8406539

Նախատեսվում է իրականացնել մանրամասն երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ տուֆերի որակական հատկանիշները պարզաբանելու և արդյունաբերական կարգով օգտակար հանածոյի պաշարները հաշվարկելու համար:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132մմ և 112մմ տրամագծերով, ՈՒԳԲ-50Մ (ԳԱԶ-66-02) տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 10 հորատանցք՝ մինչև 15մ խորությամբ՝ ընդհանուր 150մ ծավալով, որը ենթակա է փոփոխման կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%: Նախատեսվում է հորատող հաստոցի 10 տեղակայում և տեղահանում:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալներն ըստ տեսակների հետևյալն են.

- Հորատահանուկի փաստագրում – 150.0մ,
- Փորձնական բացահանքի փաստագրում – 40.0մ:

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ 300մ^3 ընդհանուր ծավալով, որից 200մ^3 թարմ չհողմնահարված տուֆեր, իսկ 100մ^3 դելյուվիալ առաջացումներից ու հողմանահրված ապարներից: Փորձնական բացահանքի ընդհանուր ծավալը կկազմի 300մ^3, իսկ նախատեսված փորձնական հանույթի ծավալը՝ 200մ^3:

Նմուշարկումներն իրականացվելու են հորատանցքերի հորատահանուկից և բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 22 հանուկային նմուշ՝ մինչև 5.0մ երկարությամբ, 2 մենաքար բացահանքից, ինչպես նաև 1 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ՝ քիմիական կազմը որոշելու համար: Վերցված նմուշները կենթարկվեն համապատասխան փորձարկումների տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Անալիտիկ» ՓԲԸ լաբորատորիայում:

Հետախուզվող տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել համապատասխան ուսումնասիրություններ և դիտարկումներ, ինչպես նաև՝ ռադիոմետրիական չափումներ երևակման ամբողջ տարածքում СРП 68-01 ռադիոմոտրի միջոցով, որը կիրականացվի հորատման աշխատանքների և բացհանքի

անցումից հետո: Հաշվի առնելով տեղամասի հարթ ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները՝ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում: Հողի վերին շերտի պահպանության նպատակով, ըստ նախագծի, նախատեսվում է փորձնական հանույթի ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո լանդշաֆտի վերականգնման նպատակով՝ ծածկել հողաշերտով: Վերականգնումը իրականացվելու է ձեռքով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրագործման համար ընկերության կողմից նախատեսվում է 96.000 հազ. դրամ:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում:
- Հորատման թագագլխիկների հավաքում՝ որպես մետաղական ջարդոն, իսկ աշխատանքների ավարտից հետո հանձնում մասնագիտացված կազմակերպություններին՝ վերամշակման համար:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պոլիէթիլենային տոպրակների մեջ, աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայով տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր :
- Մեքենաների վրա արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փորձնական արդյունահանման ժամանակ լեռնային զանգվածի ջրում:
- Դաշտային հորատիպ զուգարանում կեղտաջրերի հավաքումը, որը աշխատանքների ավարտից հետո դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, դատարկված փոսը լցվելու է քարերով:

Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում՝ հորատման թագիկների հավաքում և հանձնում, դիզելային վառելիքի մնացորդների հանձնում վերամշակման կետեր:
- Կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով՝ աղմուկի մակարդակի վերահսկում:
- Խմելու և տեխնիկական ջուրը աշխատանքների տեղամաս է բերվելու ավտոտրանսպորտով՝ Թալին քաղաքից՝ պայմանագրային հիմունքներով:

Թալին-1 երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Սնատ» ՍՊ ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես՝ չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Պատճառաբանական մաս. երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ
РА ЕРЕВАН ГОРОДСКОЙ УЧАСТОК
RA YEREVAN CITY SITE

Թալին համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սնատ» ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալին-1 տուֆերի հանքերևակման տարածքում 2019-2021թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան